ՏԵՂԱԿԱՆՔ

«Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծում (Պ-061.1-11.07.2017-ՊԻՄԻ-011/0) կատարված փոփոխությունների

«ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Հանրային ծառայության մասին» ~~Հայաստանի Հանրապետության օրենքում~~ Հայաստանի Հանրապետության 2011 թվականի մայիսի 26-ի ՀՕ-172-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 2-րդ հոդված 3-րդ մասի «մարմիններում» բառից հետո լրացնել «քաղաքացիական աշխատանք կատարող, ինչպես նաեւ» բառերով:

Հոդված 2. Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ կետը«Երևան քաղաքի և կայազորների դատախազները, » բառերից հետո լրացնել «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի նախագահը և նրա տեղակալները, Հայաստանի Հանրապետության հատուկ քննչական ծառայության պետը և նրա տեղակալները,» բառերով:

Հոդված ~~2~~3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը: